

ՏՈՔԹ. ՎԱՀՐԱՄ Յ. ԹՈՐԳՈՄԵԱՆ

Յ Ո Ւ Շ Ա Տ Ե Տ Ր Է Ս

Ը.

1919 տարին պոլսահայ կեանքին ամենատենդոտն եղաւ, լի բազմազան զբաղումներով: Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչներուն փարիզ ուղեւորելէն եւ զանազան տեղերէ եկած հայ պատերազմներուն ալ մեկնումէն յետոյ, ունեցանք եւրոպական թերթերու շատ մը թղթակիցներ, բոլորն ալ հայկական հարցով ջերմապէս հետաքրքրուողներ, որոնց մէջ ամենասրտցաւներն ու անկեղծներն էին, ըստ իս, անդղիացի Հովքին ու գերման Տոքթ. Լէփսիւս, *) ինչպէս կրցայ դատել, երբ ասոնք կուգային ինձ մօտ եւ կը մնային, երկար տեղեկութիւններ նօթագրելու:

Վայելիցինք նաեւ կարեւոր անձնաւորութիւններու, նշանաւոր դորաւարներու ներկայութիւնը, Ամերիկեան Կարմիր Խաչն ու պատերազմութիւններ եւ ուրիշներ, որոնք պատուեցան միշտ մեծածախս, ճոխ թէյստեղաններով ու ճաշերով. եղան, արդարեւ, քաղցր յոյսերու աւետատու, բայց ի՞նչ օգուտ, որ ժամանակի պատահարները ու քաղաքական անակնկալներ չիրականացուցին մեր փափաքն ու իղձերը:

Արագ ու թուրքիկ տկնարկ մը 1919-ի պոլսահայ կեանքի իրողարձութիւններուն վրա, զուրկ չէ հասկանութենէ:

Ինչպէս նախորդ գրութեամբս յայտնած եմ, «ԼիկԱ»-ն յաջողած էր, նախաձեռնութեամբ իրաւադէտ Հմայեակ Խոսրովեանի, կազմել Հայ - Յոյն - Հրեայ խորհրդակցական ժողով, որ կը դումարէր մերթ յոյն ծանօթ բժիշկ Տոքթ. Բարաի տունը, կամ Խոսրովեանի եւ կամ իմ տունս, եւ մերթ ալ՝ հրեայ խախտմարանի Վարչութեան ատենապետ Թաւանթօի բնակարանը:

*) Այս անձը փաստաւից խիստ լաւ գործ մ'ալ հրատարակեց հայկական տեղահամալսիւններու եւ ջարդերու մասին, փրանսերէն լեզու:

Երեքական անձ՝ երեք հասարակութենէն կը բաղկացնէին այս խորհրդակցական ժողովը, որուն օրակարգի ղլխաւոր ու էական հարցըն էր՝ ոչ - իսլամներու ղինւորադրութեան խնդիրը: Շա'տ մեծ էր այս մասին մեր ունեցած մտահոգութիւնը. կը խորհէինք միջոցներ՝ այդ որոշումին դործադրութեան առաջըն առնելու համար, եւ զայն բոլորովին ջնջել տալու:

Խմբադրւեցաւ հաւաքական աղերսագիրը, ստորադրուեցաւ հինգ օրինակ եւ 1919 յունւար 20-ի օրը, ես ու Տոքթ. Բարա եւ Թառանթօ, երեքս միասին անձամբ տարինք մեր աղերսագիրը անդլխական, Փլրանսական, ամերիկեան, իտալական եւ հելլենական դեսպանատունները, խնդրելով՝ որ դեսպանները իրենց բոլոր ազդեցութիւնը բանեցնէին թուրք կառավարութեան մօտ, որպէսզի այլեւս անդործադրելի ընել տան ոչ - իսլամներու ղինւորադրութեան որոշումը, որ մեծագոյն աղէտներու պատճառ եղած էր:

Այս հինգ դեսպանատուններէն կարի՝ վստահացուցիչ խոստումներ մեզ եղան եւ հաւաստիքներ, թէ արդիւնաւոր հետեւանք եւ դահացում պիտի տրւէր այս հաւաքական խնդրանքին, բայց... բայց... «գո'ւր քանի, անօգուտ վատտակ» եղաւ վարձատրութիւնը այս յոգնաջան ղիմումներուն: *)

*) Այս այցելութիւններու միջոցին՝ միտքս եկաւ որ 1913 Իւնիս ալ այսպիսի այցելութիւններ մը ըրած եմք Պատրիարքական փոխանորդ Երանդ վարդապետ Փերտահեմեանի հետ (այժմ Արքեպիսկոպոս եւ Առաջնորդ Պուլկարիոյ):

Այդ տարի հայ տառերու գիւտին 1500ամեակի եւ հայ տպագրութեան 400ամեակի յոբելեանները տեղի ունեցան մեծ հանդիսութեամբ, որուն կարգադիր Յաննախումբին նախագահն էի: Տօնակատարութենէն (13 Հոկտ.) յետոյ երբ Ազգ. երեսփոխանական ժողով գումարուեցաւ, ես առաջարկեցի, որ մեր ազգին կողմէ երախտագիտական ուղերձներ մատուցին այն Տէրութիւններուն, որոնց մայրաքաղաքներուն մէջ հայերէն լեզուի դաստանդութիւններ կըլլային անխափան:

Ժողովը միաձայնութեամբ ընդունեց առաջարկս. ուղերձները խմբագրեցան եւ պաշտօն տրեցաւ ինձ, որ զանոնք անձամբ տանիմ դեսպանատունները, փոխանորդ Հայր Սուրբին հետ:

Եւ այդ ասեմներն էր, որ եւրոպական Դաիլիները որոշած էին, որ հայկական մանամգներու բարեկարգման գործին հսկող ու կատարողներն ըլլան փրանսական եւ ռուսական կառավարութիւնները:

Ուստի, 1913 նոյեմբերի սկիզբը գացինք մալ գերման դեսպանատունը. դեսպան Վանկէնհայմ, այդ խարդախ ու շողմարար պարոնը (որ Պուլտոյ մէջ մեռաւ), անձամբ ընդունեց մեզ եւ գրեթէ ժամու մը չափ զմեզ փաղաքշելէ յետոյ, շնորհա-

Հակառակ յուսարարութիւններու, մենք կը շարունակէինք մեր սկսած գործերը. Հայ Կարմիր խաչը՝ աջակից ունենալով իրեն Հայ տիկիւններու եւ օրիորդներու անձնանէք խումբ մը՝ կաշխատէր ախ եւ գիշեր, միջոցներ կը խորհէր ծով ցաւերու դարման ճարելու:

Հայկական կեանք կը վերածնէր. Հայ թատրոնը մեծանուն Սեւուսեանով յարութիւն առած էր, Աշխատանքի տունը կը յառաջդրմէր, բարենպաստակ Միութիւններ հետ ընդ հետ կը կազմէին, ամէն ոք զործունէութեան լծած, կապէր՝ ակնակառոյց միշտ գէպի Մայր - Հայաստան, դէպի նորաստեղծ Հայկական Հանրապետութիւնը:

Բայց արի տես, որ Ահարոնեանէ նամակ մը՝ 3 փետրւար 1919 թւական, իր Մարտէյլ հասնելը կը յայտնէր ինձ, եւ ամերիկեան բա-

կալութեամբ առաւ մեր տարած ուղերձը եւ յանձնարարեց մեզ աւետիլ ազգին քէ ա՛յլեւս փրկւած է Հայ Դատը: ??

Գերման դեսպանին բովէն ելլելով ուղղեցանք ֆրանսական դեսպանատունը, ուր դեսպան Պ. Պօմբառ գմեզ շատ սիրալիկ կերպով ընդունելէ վերջ, կարդաց մեր ուղերձը եւ շնորհակալ եղաւ: Բայց երբ ես ինքն հարցուցի իրեն քէ՛ իրա՞ն է, որ հայկական նահանգներու վիճակը պիտի բարելաւի. ուժգին ձայնով մը պատասխանեց. «Ո՛ր» եւ յարեց. «Յորհափ երկաթուղիներ չլինին Հայաստանի մէջ եւ կեանքի ու ինչքի ապահովութիւն չըլլայ, անկարելի է բարեկարգում կամ բարենորոգում»: Տխուր, շա՛տ տխուր մեկնեցանք Պ. Պօմբառի բովէն, ու առանց շունչ առնելու, գացինք քուսական դեսպանատունը: Հոն՝ դեսպան Պ. Կիրս անմիջապէս մեզ ընդունեց, եւ երբ մեր ուղերձը իրեն մատուցինք, «ի՞նչ է այս», հարցուց: Հարկ եղած բացատրութիւնները տւի: Առանց զիս երկար մտիկ ընելու, օձիքէս քաշեց ու քսաւ. «Ի՞նչ է պատահած Ատափաղարի մէջ»: Փոխանորդը խօսք առնելով բացատրութիւն տաւ, քէ՛ «Հայ տառերու եւ Հայ տպագրութեան գիւտին առթիւ, ինչպէս Պոլիս, նաեւ ուրիշ տեղեր ալ հանդիսութիւններ տեղի ունեցան: Ատափաղարի մէջ, երբ Հայերը թափօր կազմած, երգերով, դէպի եկեղեցի կուղևորին եղեր, թուրք ոստիկաններ կը յարձակին, արգելք ըլլալ կուզեն, որով ժողովուրդը զրգուռելով՝ կը սկսի ծեծել արգիւրդ ոստիկանները, եւ կուս տեղի կուռնայ: Տեղւոյն կտափաւրիչը, փոխանակ յանցաւոր ոստիկանները պատժելու, 10 - 15 Հայեր ձերբակալել կուտայ եւ հսկողութեամբ Պոլիս բանտ զրկել կուտայ... Ահա եղելութիւնը»:

Պ. Կիրս, մեր տարած քուրքը դարձեալ մէկդի նետելով՝ քեւէս քաշեց ու ֆրանսերէն լեզուով քսաւ. «*Ecoutez, je ne sais ce que je ferai, mais je m'occuperai de cette affaire*»: Ու, քանի մը օր յետոյ, բանտարկւած Հայերը իրենց տեղը վերադարձան եւ ոստիկաններն ալ պաշտօնանկ եղան:

Տ. Վ. Յ. Թ.

նախի ղինուր Արօեան անուն երկտասարդը ինձ ծանօթացնելով հանդերձ, դառն տրամութեամբ կը դրէր, թէ ո՞ր աստիճանի անտեղեակ է հայ ցաւին քաղաքական աշխարհը: Ահա այդ նամակը.

Մարտէյլ, 3 փետրուարի, 1919

Splendide Hôtel

« Իմ շատ սիրելի բժիշկ,

« Ձորս օր ատուջ հասանք Մարտէյլ, չա՛տ անողորմ ծովով, յոգ-
« նութիւնս այնքան մեծ եղաւ, որ հարկ էր այստեղ երեք օր հան-
« դատանալ: Մեկնում ենք Պարիզ այս օր երեկոյեան, առողջ ենք
« ամենքս: Այս տեղից խիկ նկատում եմ թէ ո՛րքան անձանօք է քա-
« ղաքանակն աշխարհը մեր ցաւերին, մեր հերոսամարտին եւ հետե-
« ւապէս մեր պահանջներին ու իրաւունքին:

« Գրաբերս՝ ամերիկեան բանակի հայ կապիտան Արօեան դէպի
« Արեւելք է գալիս յատուկ միտինով. խնդրում եմ յատկապէս Ձեր
« եւ մեր ազգայինների լիաբունն աջակցութիւնը: Ըստ իս՝ լաւ է որ
« սլարոնը Երեւան - Կովկաս եւ Հայ Հանրապետութիւնն այցելի: *)

« Կինս սրտազին ողջոյն է ուղարկում Ձեզ եւ Ձերոնց:

« Իմ ջերմ սղջոյնները ընդունեցէք ամենքդ:

« Միշտ Ձեր, Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ »

Ահարոնեանի այս նամակը ո՛րչափ որ ցաւազգեցիկ, այնու ամե-
նայնիւ, արդեւ չէր զաւ որ մենք կասէինք մեր ազգային հետապնդում-
ներուն մէջ:



Յոյները որոշած էին, զի իրենց Պատրիարքական Տեղապահը
(Պատրիարքին վախճանած էր), որ սոսկալիօրէն առեցող մ'էր

*) Սփանչիլի զինուոր մ'էր Պ. Արօեան. զնաց Երեւան, դարձաւ լաւ ու գէշ լու-
րերով: Այցելեց ուրիշ հայաբնակ քաղաքներ, ապրեցաւ Ֆրանսայի փութքի քա-
ղաքը, ուր նշանաւոր ընտանիքի մը աղջկանը հետ ամուսնացաւ: Եկաւ Կ. Պոլիս
ու բաւական ատեն մնաց, եւ յետոյ մեկնեցաւ Ամերիկա ու քանիցս գրեց ինձ, միշտ
հայ աշխարհի սիրովը վառվառ:

Թուրքին, երթայ փարիզ, Պատրիարքարանի Վարչութեան ատենապետ Տոքթ. Բարաի հետ, եւ Խաղաղութեան Վեհաժողովին ներկայացնէ Թրքական անլուր խժդժութիւններուն մանրամասն պատմութիւնը, ինչպէս նաեւ Թուրք բռնապետութեան տակ հեծող քրիստոնեայ ժողովուրդին ցաւատանջ վիճակը, եւ հայցէ ճար ու ճարակ անոնց կատարեալ ազատութեանը համար:

Այս նպատակաւ խմբադրեցաւ խիստ կարեւոր եւ վաւերական Յիշադիր մը, զոր հրեայ հասարակութեան ներկայացուցիչները չուզեցին ստորագրել, առարկելով թէ հրեայ ժողովուրդը Թուրքերէն ասպնջական եղած հիւր էր եւ թէ՛ չունէր այն ցաւերը, զորս ունին հայ եւ յոյն աղբերը: Հարկ եղաւ դրածը փոխել, պատրաստել ուրիշ մը, միայն եւ միայն հայ եւ յոյն աղբերուն անունով:

Յոյն Տեղապահը եւ Տոքթ. Բարա դեռ մեկնած չէին, երբ 1919 փետրուար 8-ին մարաշխտ Թրանչէ տ'էսրէրէի յաղթական մուտքը տեղի ունեցաւ ի Կ. Պոլիս:

Թրանսական անլանի զօրապետին համար եղաւ խիստ փայլուն ու խանդավառ ընդունելութիւն, որուն զլուխ կանգնեցաւ ամբողջ հայ ժողովուրդը, եւ նոյն օրն իսկ, Բերա, Փրանսական դեսպանատան մէջ, հայ աղբին կողմէ բարեկէի ուղերձ մը մատոյց մարաշխտին հայ երիտասարդութիւնը, յատուկ պատգամաւորութեամբ մը, բաղկացած Տ. Չայեանէ, Լ. Երազեանէ, Տոքթ. Թաթարեանէ եւ ողբացեալ Արամ դաւակէս:

Այդ ուղերձը ստանալէ յետոյ, Թր. տ'էսրէրէ, ինչպէս այն ատենի Թերթերը գրեցին, շնորհակալ հայ աղբին ըլլալով՝ այն մեծ համակրութեան համար, զոր միշտ ունեցած է նա հանդէպ Թրանսայի, յայտարարած է, թէ՛ քաջատեղեակ է Հայերու ընտիր յատկութիւններուն եւ կարողութիւններուն, եւ թէ ծանօթ է տաղանդաւոր Հայուհիի մը, այն է՝ Հռոմի դեսպան, նշանաւոր ակադեմիական Գամիյ Պառէռի կնոջ (ծնեալ՝ Տամատեան), որ իբրեւ դեսպանուհի, խտալական կառավարութեան մօտ՝ մեծապէս պատուարեր եղած է Թրանսայի:

Ահ, քաղցր յոյսերու եռանդալից երջանիկ օրեր, որոնք այսօր երազի մը տպաւորութիւնը հազիւ թողած են մեր վրա:



Թրանսայի մարաշխտին զաւստեան յաջորդ օրը, Ֆէնէրի Յոյն Պատրիարքարանը չքեղ ցերեկով մը կը սարքէր (9 փետրուար 1919), ի պատիւ հելլէն ծովապալիս եւ անոր հետեւորդներուն: Այս առթիւ

հրաւէր զրկւած էր նաեւ մեր Պատրիարքարանին, ու Մեսրոպ Սրբա-
ղան Նարոյեան՝ Պատրիարքական Տեղապահը (այժմ Պատրիարք),
ներկայ եղաւ ու մասնակցեցաւ արդէ ցերեկոյթին, հետը առնելով զիս
ու Տոքթ. Դաւիթեանը, եւ մենք երկու հայ բժիշկներս կրցանք մեր
բաժակաճառերով ի վեր հանել հայ եւ յոյն միութեան վաղնջակա-
նութիւնը ու ներկային անկէ ծնելի մեծամեծ ու կենսապահ օգուտ-
ները:

Քանի մը օր յետոյ, Յոյն Բժշկական Ընկերութիւնը Բերայի Սիւ-
լոդոսին մէջ կատարեց մեծ սգահանդէս մը, նահատակ հայ եւ յոյն
բժիշկ եւ դեղագործներու յիշատակին նւիրւած, որուն հրաւիրւեցաւ
Հայ Բժշկական Միութիւնը, եւ ես, իբրեւ նախագահը այս Միու-
թեան, պատիւն ունեցայ հայ բժիշկներու կողմէ արտասանել հոն քա-
նի մը ողբերգու խօսք՝ նահատակւած արեւստակիցներու ազիւղորմ
մահաւան առթիւ:

Այլ սակայն, մեր այս հանդէսներու միջոցին, վրդովիչ լուրեր
կը հասնէին Հայաստանէն: Կ'իմանայինք, թէ հուրէն ու սուրէն փա-
խստական հոն ապաստանած բիւրաւոր ազգայիններու մէջ համաճա-
րակ հիւանդութիւններ ծագած էին, եւ անհրաժեշտ էր փութացնել
դեղ ու դարման եւ այլ ամենայն ինչ որ հարկաւոր էր կեանքեր փրկ-
ելու համար:

Ամէն Զանք կ'ընէր այս մասին Հայ Կարմիր խաչը, անդուլ կը
դործէր իր ուժերէն շահ մեր մազլիլով եւ գոնցէ յափաթեւս իյ-
նար, եթէ օտար Կարմիր խաչերու օգնութիւնը զօրավիգն չըլլար
իրեն:

Այդ օրերուն, Ամերիկեան մեծահարուստ Կարմիր խաչի մէկ
Յանձնախումբը կը հասնէր Կ. Պոլիս, նախագահութեամբ հայասէր
Տոքթ. Վօչալընի: Անմիջապէս փութացինք դիմել, մեր հետն ունե-
նալով ծերունին Տոքթ. Ն. Պ. Մատթէոսեան (այժմ մեռած), որ շահ
մտերիմ բարեկամն էր Վօչալընի, եւ խնդրելով խնդրեցինք, որ ան-
յապաղ Հայաստան փութացէր հարկաւոր եղած բաները:

Ամերիկեան Կարմիր խաչը շուտով գոհացում տւաւ մեր այս դի-
մումին, եւ մեծաքանակ դեղ ու անուշիկ իր ծախքերով հասցուց Հա-
յաստան:

Այդ օրերուն էր, այսինքն՝ 1919 փետրւար 20ին, որ Զաւէն Պատ-
րիարքը (ընտրւած 12 սեպտեմբեր 1913-ին եւ աքսորւած 1915-ին),
կը վերադառնար իւր Աթոռը եւ կը բերէր անդդիական Césaire զը-
րահաւորով: Առաւօտուն կանուխ կիջնէի ես Դաւաթիոյ քարափը, չո-
ղենաւին մէջ բարի գալուստ մաղթել իրեն:

Բայց ի՞նչ արտառոց անակնկալ մը վերապահած է եղեր ինձ, այդ օրը, իմ այս այցելութեանս փոխարէն... :

Յաջորդ օրն իսկ՝ «Թասվիրը Էֆֆեար» թուրք թերթին մէջ կը գրէր, «իբրեւ քէ ես, Պատրիարքին ցամաք ելած միջոցին, քարափին վրա խոնամ հայ ժողովուրդին հոծ բազմութեան մէջ, քուրք ոստիկան մը մէկդի եմ հրէր ու զայն անարգեի եմ, կարգ մը անհան խօսքերով...»:

Անմիջապէս բողոքի ձայն բարձրացուցի հրապարակաւ եւ երեք օր միջոց աւել Ոստիկանութեան նախարարին, պահանջելով որ խիստ քննութիւն մը կատարել տար, ստուգէր թէ՛ իրաւացի՞ էր իմ անուշիւ շուրջ յերկրւածը. ապա թէ ոչ՝ պատուոյ դատ սխտի ունենայի իր դէմ:

Հրաւիրւեցայ ոստիկանատուն (Սանասարեան խանը՝ գրաւած), ուր գացի մեր Պատրիարքարանի դորժակատար Յակոբ Համամճեանի հետ. ներկայացայ նախարարին, որ իր ներկայութեանը կանչել տաւ խնդրոյ առարկայ ոստիկանը եւ հարցուց իրեն թէ՛ ո՞վ էր զինքը վանողը եւ անարգողը՝ Զաւէն Պատրիարքին նաւէն դուրս ելած սրահուն:

Ոստիկանը պատասխանեց՝ թէ անձ մ'էր, որուն անունը հոն ներկայ բաղմութեան մէջ եղողներուն հարցնելով՝ իմացեր էր, թէ Տոքթ. Թորգոմեանն էր:

«Եթէ այդ անձը տեսնելու ըլլաք, կը մանչնա՞ք», հարցուց նախարարը: «Այո՛», պատասխանեց ոստիկանը:

Եւ նախարարը զիս ցոյց տալով՝ «Կը մանչնա՞ք այս անձը», ըսաւ: Ոստիկանը՝ «Ո՛չ, առաջին անգամն է, որ կը տեսնեմ այս էֆէնտին», պատասխանեց:

«Ահա՛, Տոքթ. Թորգոմեանը ինքն իսկ է», յարեց նախարարը, ու ոստիկանը սիւշ - սիւշ զիս երկար դիտելէ յետոյ՝ «Սիգ տէյիլ իտինիզ, աֆ իտէրսինիզ (դուք չէիք, կը ներէք), ըսաւ, ու նախարարն ալ ներողութիւն խնդրելով, հետեւեալ օրը դարձեալ վերոյիշեալ թուրք թերթին մէջ հերքում հրատարակել տաւ, եւ գրեց՝ թէ, յետ քննութեան, իմացեցաւ, որ ոստիկան անարգողը Տոքթ. Թորգոմեանը չէ եղեր, այլ ուրիշ մէկը, որ մնաց անծանօթ:

Ա՛հ, դեռ ո՛ր մէկը պատմեմ, ո՛ր մէկը միտքս բերեմ ու գրեմ. բա՛ւ թող ըլլայ ժամանակագրական կարգաւ արագ նշանակել բոլոր եղածները, զորս կը քաղեմ Յուշատետրէս, հակառակ որ, անոնց քանինները նախորդ գրութիւններուս մէջ անցողակիօրէն մէջ բերած եմ, մանաւանդ Արշակ Զօպանեանի ուղղած նամակիս մէջ:

Փոքր կրկնութիւն մը, սակայն, ներկի ինձ բլլայ:



Բացի այն զիմումներէն զորս ըրինք Ամերիկեան Կարմիր Սաշին մօտ եւ ունեցանք զոհոնակութիւն, Հայաստանի Պատգամաւորութեան քարաուղար Պ. Ֆէր. Թախթաճեանի հետ, զիմեցինք քանի՜ - քանի՜ անգամներ Միջազգային Կարմիր Սաշի ներկայացուցիչ (28 Փետրւար) Կոմս ալ Լարալիս անուն մարդուն, որպէսզի օգնութիւններ հասցնէ Հայաստան: Այս անձը, որ ի սկզբան մեծ համակրութիւն ցոյց տւաւ Հայերու նկատմամբ, ինչպէս յիշած եմ արդէն, եւ անկեղծ հոգածութիւն ուղեց ունենալ զարման ճարելու հայկական աղէտներուն, որոնց մասին խիստ մանրամասն եւ սրտառուջ տեղեկագիր մը պատրաստեց ողբացեալ ցուակա Արամ եւ տւաւ իրեն, այս անձը, կըսեմ, փոխւեցաւ, յանկա՛րծ, երբ տակաւ ծանօթացաւ թուրք միջառնայրին ու մուս Կոմս թրքուհիներու շրջանակին մէջ: Սկսաւ ո՛չ միայն անտարբեր ընթացք ունենալ, այլ եւ թշնամանալ մեզի հետ, ա՛յն ատիւճան որ խզեց իր յարաբերութիւնները եւ արդիւնեց մեզ դործածել «Հայ Կարմիր խաչ» յորջորջումը եւ իմ անձիս ալ ուղղեց կոշտ ու կոպիտ նամակ մը, ինչպէս յիշած եմ նախապէս, որուն համար ստիպուեցայ բողոքել Ժընև, Միջազգային Կարմիր Սաշի նախագահ մեծ հայտաւր Լէոփոլտ Փափսին դիմել, Լարալիսի կեղտոտ նամակը զրկել իրեն, որ շատ չանցած պաշտօնանկ ընել տւաւ այդ հրէշ հայատեացը եւ Կ. Պոլսոյ Հայ Կարմիր Սաշի պաշտօնապէս ճանչցուց իրեն խորհրդակցական կազմակերպութիւն:

1919 Փետր. 23-ին հաստատած էինք հիւանդապահութեան դասընթացք (ինչպէս բւժած է) եւ կը շարունակէինք դասոնք Կ. Պոլսոյ քանի մը թաղերուն մէջ, հիւանդանոցներ էինք բացած, որբանոց ու որբուհիանոցներ կազմած էին, տենդոտ դործունէութիւն կար, որով օտարներու հիացումը դրաւած էինք:

Այսպէս, Փետր. 27ին հրաւիրւեցանք Վոսիտրի Առնաւուտ - Բէօյ կոչւած վայրին բարձունքը կանգուն ամերիկեան Հոմ - Սքուլ աղջիկներու վարժարանը, մասնակցելու Ամերիկեան Կարմիր Սաշին ի պատիւ ստրբւած փառաւոր թէյյասեղանին, որուն նախապատիւ հիւրը եղաւ Զաւէն Պատրիարք:

Երկու օր վերջ Պատրիարքը փոխարինեց այս թէյյասեղանը Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցիին խորհրդարանին մէջ, բայց երբ լուր առնեցաւ թէ ամերիկեան Քննիչ Յանձնախումբ մը եկած էր Կ. Պոլիս եւ պիտի երթար Հայաստան ու այցելէր հայաբնակ դաւառները, տեղւոյն վրա քննութիւններ կատարելու համար, Զաւէն Պատր-

ընթացք վաղեմաց Մարտ 1-ի օրը այդ Յանձնախումբն ալ հրաւիրել Բերայի խորհրդարանը եւ պատուէլ մեծաչուք թէյասեղանով, որու միջոցին արտասանեցան երկուստեք ճառեր եւ արտայայտեցան իդձեր Հայաստանի վերջնական փրկութեանը համար:

Այս Յանձնախումբին կընկերանար, իբր թարգման, այնթապցի Յարութիւն Խաչատուրեան հարիւրապետ զինուորը, ազգասէր ու բարեկիրթ երիտասարդ մը, որ քանիցս եկաւ ինձ մօտ տեղեկութիւններ քաղելու, եւ ես զինքը մասնաւոր դրով յանձնարարեցի Հայոց Ընդհանուր Հայրապետ Գէորգ Ե. Կաթողիկոսին:

Մարտ 4-ին Յոյն Տեղապահը մեկնեցաւ դէպի Փարիզ, Տաքթ. Բաբային հետ, որուն յանձնեցի կարգ մը նամակներ՝ Նորասուսիէէն Գաբրիէլի եւ Արշակ Չօպանեանի ուղղւած: Տեղապահը իր ծոցն ունէր այն Memorandum-ը զոր պատրաստած էր Հայ - Յոյն Յանձնախումբը, եւ մեր լսածին համաձայն, խեղճը ոգի ի բռին աշխատած էր, այդ գիրին պահանջները զործադրել տալու Խաղաղութեան Ժողովէն, բայց ի զո՞ւր, ո՛չ մէկ յաջողութիւն չէր կրցած ձեռք բերել, եւ խորապէս վշտացած, սրտի կաթւածէ կնքեց իր կեանքը Փարիզի մէջ:

1919 Մարտ 6-ին Կ. Պոլսոյ Փրանսական դեսպանատան մէջ կադմուսեցաւ Ֆրանքօ - Առմէնիէն Դիւանը, որուն նախագահ որոշեցաւ Յակոբ Էսաեան, եւ ասոր քանի մը շարաթ յետոյ յաջորդեց՝ Արամ Բէօջեան:

Այս Դիւանին պաշտօնն եղաւ ճամբորդ Հայերու տալ տեսակ մը անցազիր, որով պիտի կարենային Փրանսական պաշտպանութիւնը ունենալ իրենց ուղեւորութեան միջոցին եւ նկատել իբրեւ Փրանսահայրապետ, բան մը՝ որ եղաւ խարէական (չըսեմ գրամաչորթական) եւ մինչեւ անգամ միասարբեր զայն ունեցողին: (*)

Ձաւէն Պատրիարք իր ներկայութիւնը զգալի բնել տալու համար,

*) Նոյն ատեններն էր որ Բերայի Ս. Նրորդուքեան եկեղեցիին խորհրդարանին կից հաստատեցաւ «Տեղեկատու Դիւան» մը, որ հաւաքեցաւ ամէն ինչ որ կը վերաբերէր հայկական քարոյրու պատմութեան եւ ամէն ի՞նչ որ հրատարակւած էր այս մասին:

Այս Տեղեկատու Դիւանը մեծ ծառայութիւն կը մատուցանէր, եւ այցելու օտարներ ու քաղաքացիներ շա՛տ բան կը փաղէին հոն գտնւած document-ներէն: Դիւանին տնօրէնն էր Նուրիան Կարապետ եւ զիւսնապետը՝ ծանօթ պատմագիր Արշակ Ալւոյանեան, որ մասնաւոր ջանքով ժողոված էր հայ եւ օտար լեզուով եղած բոլոր հրատարակութիւնները:

սկսաւ պաշտօնական այցելութիւններ ընել օտար ղեսպանատունները, հայ ցաւին ճար - ճարակ մուրալու համար: Գնաց այցելեց անդղիական, Փրանսական, ռուսական ղեսպանատունները, եւ երբ կարգը եկաւ խալականին, չգիտեմ ինչո՞ւ, ուղեց զիս իր հետը ունենալ, արդեօք անո՞ր համար թէ ունէի մտերմութիւն ղեսպանատան բըժիշկ Տոքթ. Ծերիի հետ, այդ համակրելի հայասէրին, որ, երբ ես քաղաքէն քաշուի, նա եղաւ միակը, որ ամէն օր կը հետախօսէր վըրտարեկ կնոջն ու զաւակներուն, հարցնելով թէ ի՞նչ կերպով կրնար օգտակար ըլլալ մեր դժբախտութեան:

1919 Մարտ 7-ին էր, Պատրիարքը այցելեց ինձ հետ խալական Haut Commissaire Կոմս Սֆորցային: Սֆորցա շատ համակրալից ընդունելութիւն մը ըրաւ, եւ խօսակցութիւններու միջոցին, երբ տեսանք որ ինքը այնքա՛ն սէր ու համակրանք ցոյց կուտար դէպի տառապահոծ հայ աղղը, ես խօսք առնելով, ըսի թէ, Իտալիա մասնաւորապէս պարտաւոր էր հայ աղղին երջանկութեանը համար չղանալ իր աղղեցութիւնը, որովհետեւ Հայա - Կիլիկեան թաղաւորութեան ժառանգութիւնը կը պատկանի Իտալիոյ, այսինքն Սալուայի տան:

Սֆորցա այս խօսքիս վրա հարցուց թէ՝ «Ի՞նչ ԳԷՄ»:

Տէի հարկ եղած բացատրութիւնները եւ յաջորդ օրը Ծէրիի միջոցաւ յղեցի այս մասին Վիքթոր Լանկուայի եւ ուրիշներու կողմէ հրատարակած վաւերագիրները, որոնք կը հաստատէին ըսածներս եւ որոնք մնացին Սֆորցայի քով, առանց որ եւ է արդիւնքի:

Մարտ 14-ին Հայ Կարմիր Խաչը, ի հեճուկս Լարալիս անպիտան արարածին, կաղմակերպեց, Փրանսացի ծովակալ ամիրալ Ամէի բարձրը հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ, thé - concert մը, խիստ փառաւոր, Թէփէ - Պաշիի ընդարձակ պարտէզին մէջ, ուր Փրանսական զրահաւորներու նաղածու խումբը եկաւ նաղել «Արիֆ Հայկագուսի»-ը եւ «Լա Մարսէյեզ»-ը, ներկայ էր հաղարաւոր հայ եւ օտար երկսեռ բաղմութիւն մը, որ ծափողջոյններով պատուեց Փրանսացի ներկայացուցիչները: Այս հանդէսը ձեռք բերաւ 5000 օսմ. ոսկի, ի նպաստ Հայաստանի կարօտեալներուն:

Այս concert-ի միջոցին, պահ մը ծովակալ Ամէի մօտ երթալով՝ Հայ Կարմիր Խաչի կողմէ շնորհակալութիւն յայտնեցի իրեն, որ հաճած էր իր ներկայութեամբ մեր հանդէսին փայլը աւելցնել: Ծովակալը համակրալից խօսքերով իր գոհունակութիւնը յայտնեց եւ ձեռքս սեղմելով ըսաւ, թէ՝ «Կը յուսար շուտով աւելի փառաւոր տօներ կա-

տաբել հայ ազգին բարօրութիւնը հաստատող»։ Երա՛ղ... Երա՛ղ...
Պատի՛ր երազ... :

Բայց Ազգ. Երեսփոխանական Ժողովն ալ կը շարունակէր դու-
մարուիլ ամէն շաբթու, ինչպէս նաեւ համահայկական Ժողովները,
զորս կը բաղկացնէին կաթուիկ, բողոքական ազգայիններու կողմէ
ընտրուած պատգամաւորներ. սակայն, պարապ վիճաբանութիւննե-
րով ժամավաճառութիւն կ'ըլար եւ ո՛ր եւ է դրական կամ կենսական
հարցերու մասին բնա՛ւ երբեք տեղի չէր ունենար խորհրդակցութիւն :

Կը շարունակէին, նաեւ, թէյասեղանները, եկեղեցական հան-
դէսները, դրաւելու համար օտար պատուիրակներու եւ իշխանութիւն-
ներու համակրութիւնը :

Ըստ այսմ՝ Բերայի Ս. Երբորդութիւն Եկեղեցիին մէջ ամերիկե-
կան մեռած միսիոնարներու հոգւոյն համար տեղի ունեցաւ հոգե-
հանգստեան հանդիսաւոր պատարագ, որուն ներկայ եղան ամերի-
կացի պաշտօնական մարմիններ, դեսպանական մարմինը ամբողջու-
թեամբ : Պատարագը մատուցց Օհան վարդապետ Կարապետեան *)
(ինձ հետ աքսորակից, բայց այժմ կարգաթող), որ անգլիերէն լեզ-
ւաւ սքանչելի դամբանական մը խօսեցաւ եւ հրաւէր կարդաց ամե-
րիկեան կառավարութեան՝ պաշտպան հանդիսանալ հայ ազգին ազա-
տադրութեանը :

Ապրիլ 1-ին, հեղին դորապետ Ժէնէրալ Փառասքէվորուլօ, որ նոր
եկած էր Կ. Պոլիս, իր առաջին այցելութիւնը տաւ Զաւէն Պատրիար-
քին. սա փառաւոր ընդունելութիւն մը ըրաւ եւ կարդաց խիստ լաւ
ուղերձ մը Փրանսերէն լեզուաւ, երախտագիտութիւն յատնելով բոլոր
այն օթանդակութիւններուն համար, զորս հեղին կառավարութիւնը
եւ իր Կարմիր խաչը չէին խնայած հայ տառապեալներուն :

Զօրապետը, շնորհակալութիւն յայտնելով՝ ըսաւ, թէ հեղին աղ-
դը եւ կառավարութիւնը պիտի ջանան ընել, ինչ որ կրնան, հայ աղ-
դին բարօրութեանը համար, եւ գրպանէն հանեց 200 ոսկի ու տաւ
Պատրիարքին՝ հայ աղքատներուն ի նպաստ :

Յաջորդ օրն իսկ Պատրիարքը փոխադարձեց յոյն զօրապետին այ-
ցելութիւնը Բերա - Բալաս պանդոկը՝ հետը ունենալով զիս եւ ու-
րիշներ, եւ արժանացանք չքեղ ընդունելութեան :

*) Այս վարդապետին կարգաբողութիւնը մեծ կորուստ մ'է հայ եկեղեցիին
համար : Նշանակուած էր նա մեծ հեղինակութիւն մը ըլլալու :

Բայց Ապրիլ 12-ին Պատրիարքարան այցելեց Փրանսական նորեկ Haut Commissaire Պ. Տը Ֆրանս, որ հակառակ իրեն եղած արտակարգ պատիւներուն եւ համակրարից ուղերձներուն, ինքը շատ ցուրտ վերաբերում ունեցաւ մեզ հանդէպ, եւ մինչեւ անգամ անձա՛հ խօսքեր արտասանեց Փրանսական բանակին մէջ ծառայող հայ զինւորներու հասցէին, բնաւին մոռնալով թէ անոնք իրենց արիւնը թափած էին ի սէր Փրանսայի :

Տիգրան Զայեան, որ ընդունելութեան ներկայ էր եւ Պատրիարքին խօսքերը կը թարգմանէր, պատշաճ պատասխանը խիստ քաղաքավարի կերպով տաւ Փրանսայի ներկայացուցիչին, եւ սա իր լուրջութեամբը դաճաղ հասակը ցցելով, ելաւ գնաց, շատ արիւր տալաւ լուրջին մը մեր վրա թողլով, երբ ամէն կողմէ գովեստներ կը հրատարակէին հայ զինւորին քաջութեանը մասին, եւ մենք կը կարգաւորէինք միշտ այն անձնուրացութիւնը եւ քաջամարտիկ հերոսութիւնը, զոր հայ զինւորը Սուրիոյ Փրանսական բանակին մէջ կունենար չարունակ :

Սակայն մենք չէինք դադրէր աշխատելէ, խորհրդակցական ժողովները կը շարունակէինք Յոյներու հետ. զիշերը ցորեկին, ցորեկը դիշերին խառնելով եւ անհամբեր սպասելով, որ Փարիզ դումարեւած ժողովներէն լուրեր առնէինք եւ Հայաստանի ճշդրիտ կացութեանը մասին տեղեկութիւններ հասնէին, երբ Աւետիս Ահարոնեանի 1919 Ապրիլ 17 թւակիր նամակը կըստանայի Փարիզէն :

Նոյնութեամբ կարտագրեմ այդ նամակը, որ զուրկ չէ կարեւորութենէ, իր յուսադրիչ պարունակութեամբը. ահաւասիկ.

Hôtel Vouillemont

Rue Boissy d'Anglas, 15 — Paris

« Շատ սիրելի բարեկամ

ԲԺ. Վ. Թորգոմեան,

« Փոքր առաջ Զեզ գրեցի, սուրհանդակին չըհասաւ, պատուցի
« դիրս : Երկրորդում եմ, շատ զարմացած սակայն, որ Պոլսից ահա
« մի քանի անգամ հասնող թղթաբերները Զեզնից ո'չ մի տող բերին :
« Մասնաւորապէս կ'ինս խիստ վշտացած է տեղեկութիւն չունենա-
« լով ո'չ Զեզնից եւ ո'չ Զեբայիններից : Մեզը ունէք, շտապեցէք քա-
« լել :

« Քաղաքական անցուղարձի մասին այս երկտողով գրելը շատ
« դժւար է. վճռական որոշումներ վրա չըհասան Զեզ հաղորդելու
« համար :

« Քաղաքական անցքերի բարդութիւնն ամբողջ աշխարհում եւ
 « Մեծ Պետութիւնների թաշաւահակալական մրցակցութիւնը (մաս-
 « նաւորապէս Անգլիայի եւ Ֆրանսայի) մեծապէս դանդաղեցրին հաշ-
 « տութեան աշխատանքները ինքնազուբեան Համաժողովում եւ, որ
 « մեզ համար ամենից ցաւալին է, յետաձգեցին մեր հարցի վախճա-
 « նական լուծումը:

« Ներկայացանք Համաժողովին ես ու փաշան, այդ դիտէք. այ-
 « նուհետեւ՝ չեմ կարող ասել թէ արեւելեան խնդիրները, եւ մերը
 « ի մասնաւորի, շատ առաջ դնացած լինի: Հաւանականութիւնների
 « չըջանում ենք. ամենայն հաւանականութեամբ մեր թեւարկուն
 « (mandataire) լինելու է Ամերիկան: Այս մասին օր աւուր չանսե-
 « րը մեծանում են գրեթէ վճռականութեան հաւասար: Այս մանդա-
 « տի հետ սերտ կերպով կապւած է Կիլիկիան: Մէկն առանց միւսի
 « լինել չի կարող. եւ այն օրը՝ երբ յայտարարւի սլաշտօնապէս՝ թէ
 « Ամերիկան է մեր mandataire-ը, այն օրը կարող էք Կիլիկիան
 « (բայց տարաբախտաբար, առանց Ալեքսանդրէտի) Հայաստանին
 « կցւած համարել: Պաշտօնապէս, թէեւ տակաւին չէ հրատարակւած,
 « յայտնի է հետեւեալը: Մենք Թիւրքիայից անդառնալի կերպով բա-
 « ժանւած ենք յաւիտեանս յաւիտենից, ամէն. ո՛չ անւանական, ո՛չ
 « հեռաւոր, ո՛չ մօտաւոր քաղաքական ամենաչնչին կապ իսկ դոյու-
 « թիւն ունի մեր եւ Թիւրքիայի մէջ: Շուտով այդ բանը կը յայտա-
 « բարւի: Թիւրքիան ամենաշատ միայն Արեւմտեան Անատոլուն Կե-
 « սարիայից դէպի Տրամայ, եւ այն՝ առանց Ատալիայի, որ ստա-
 « նում է Իտալիան՝ առանց Չմիւռնիայի որ ստանում է Յունաստա-
 « նը, առանց Կիլիկիէի, որ՝ ստանում է Հայաստանը Մայր Հայաս-
 « տանի հետ:

« Յուսալից եմ, ինչպէս միշտ, լաւատես եմ, ինչպէս միշտ, մեր
 « լիակատար ազատագրումն ու Միացեալ Հայաստանը օրերի, շա՛տ
 « շա՛տ, չարաթնների գործ է:

« Կինս ու ես առողջ ենք. ջերմ սրտագին բարեւներ ենք յղում
 « Ձեզ եւ Ձերայնոց: Կինս կը գրի առանձին:

Ապրիլ 17, 1919

Միշտ Ձերդ

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

Աքանչելի լուրեր արդարեւ, խրախուսիչ եւ յուսադրիչ, որոնք,
 չգիտեմ ինչո՞ւ, հակառակ մեր սրտին ազդած բերկրութեան, կը հա-
 մակէին նաեւ դմեղ խոր տրամութեամբ, մանաւանդ, որ Ահարոնեան,
 ինքն ալ հետզհետէ կը փոխէր իր նամակներուն իմաստն ու ոճը եւ
 դառնութեան շեշտ կը դնէր անոնց մէջ, ինչպէս պիտի տեսնենք:

Բայց Հայկական Հարցով, Հայերու դործով հետաքրքրուողներու թիւը կը բազմանար տակաւ Կ. Պոլսոյ մէջ. ի՞նչ էր արդեօք պատճառը. արդեօք կը յուսայի՞ն թէ մեծ տէրութիւն մը պիտի կազմէր Հայաստանի մէջ, եւ հոն կանխաւ իրենք տեղաւորուե՞լ կուղէին, կամ թէ կը նախգլխաւ թէ բոլոր խօսւածներն ու որոշումները օգտակարոյց բաներ էին եւ տեսակ մը դժութեան արժանի կը համարէին զմեզ, որ ծանր ցաւերու տարալիւն ներքեւ ընկճւած կը մնայինք դեռ... Ով գիտէ...

1919 Սպրիլ 29-ին Զաւէն Պատրիարք կանչեց զիս ու խնդրեց որ երթամ այցելել պապական նւիրակ Մոնտէնէօն Տոլէիին ու ազաչել՝ որ բարի ըլլայ, ինչպէս միշտ, երթալ խօսիլ իտալական եւ ֆրանսական դեսպաններուն, որպէսզի իրենց ուստիկան - զինուորները աւելի փութկոտ ձեռնառութիւն ընծային թրքացւած հայ որբերն ու որբուհիները ասկէ - անկէ հաւաքելու դործին աշխատող մարմիններուն:

Կատարեցի այս պաշտօնն ալ, եւ պէտք է խոստովանիլ, որ Մոնտէնէօն Տոլէի (այժմ կարտինալ) չվարանեցաւ դոհացում տալ մեր Պատրիարքի խնդրանքին, եւ անմիջապէս լծուեցաւ այս փրկութեան դործին, եւ ո՛րչափներ հաւաքւեցան ու աղատուեցան թրքական լուծէն եւ սլատսպարւեցան զանազան շէնքերու մէջ, մինչեւ որ անոնց մասին եղան տակաւ վերջնական կարգադրութիւններ:

Արդ՝ զիւրին է դատել, թէ ո՛ր աստիճան ծանրաբեռն հոգեր եկած կուտակւած էին պոլսահայուն ուսերուն վրա, եւ ո՞ր մէկին հասնելու հնարաւորութիւն կրնար ըլլալ. հրաշք մըն էր որ տեղի կունենար. դարմանել հիւանդներ, հաց տալ չքաւորներուն, որոնք տարագրութենէ ազատւած՝ շունչերնին Կ. Պոլիս կառնէին մեծ բազմութեամբ, հաւաքել որբեր, որոնք կորսնցուցած էին իրենց ծնողքները, ախանառես խի ըլլալով անոնց նահատակութեան, դերմարդկային ճիգեր կը թափւէին, եւ չմոռնանք յիշատակելու, թէ ո՛չ մէկ զժգոհութեան տեղի չէր տրւէր, եւ աղգային իշխանութիւնները կը կատարէին իրենց պարտականութիւնը անթերի կերպով, յուսալով միշտ թէ Հայաստանի Հանրապետութիւնը տակաւ հիմնաւորւելով՝ մոռցնել պիտի տար այս բոլոր յոգնութիւնները:

Այդ օրերուն Հայաստանէն Կ. Պոլիս կուգար զօրավար Ղորղանեան, այդ քաջարթուն եւ քաջարեւատ զինուորականը, որ արդէն 1918-

ին իրրեւ անդամ Ահարոնեան Պատուիրակութեան, եկած էր եւ քանիցս վայելած էի իր այցելութիւնը:

1919 Մայիս 6-ի երեքշաբթի երեկոյին պատիւ ունեցայ տունս հրաւիրել զինքը, որ յաջորդ կամ վաղայաջորդ օրը պիտի մեկնէր Փարիզ, երթալ ընկերանալու Ահարոնեանի աշխատութիւններուն: Երկար խօսակցեցայ հետը Հայաստանի վիճակի մասին. դժբախտաբար, իրմէ լսածներս քաջալերական չէին, եւ մենք սկսանք յուսահատութեան մատնուիլ եւ ըսել՝ թէ միթէ՞ այսքան աշխատանք, յոգնութիւն եւ զոհողութիւն ի զուրը պիտի գնային: Եւ նստայ երկար դրել Փարիզ, Ահարոնեանին, որ իր 25 Մայիս թւակիր նամակովը կողեւորէր զմեզ եւ կը յուսադրէր գրելով՝

République Arménienne
Délégation
à la Conférence de la Paix
Le Président

Hôtel Vouillemont
15, Rue Boissy d'Anglas
Paris, le 25 Մայիս 1919

« Անմոռանալի քարեկամ,
« Շատ սիրելի բժիշկ,

« Նամակդ ցաւի, եթէ չասեմ անհանգստութեան շեշտ ունի:
« Հասկանում եմ Ձեզ. մթնոլորտը այդտեղ դառնում է վերստին ան-
« հանգստացուցիչ, դրեթէ սպառնական: Խնդրում եմ հաւատալ, որ
« հեռաւոր վհատութեան իսկ հիմունքներ չունենք: Այս օրերս սկըս-
« ւած է դիւանադիտական մեծ ինտրիգ, Կ. Պոլիսը Թուրքերին թող-
« նելու եւ սէլամըքով Պոլսի մեղկացած թիւրքութիւնը օրօրելու
« համար: Այս ծրագրի ուժեղ պաշտպանը — ինչպէս եւ սպասելի էր —
« Անգլիան է, որ աշխատում է սրանով հաճոյք պատճառել իր մու-
« սուլման կայսրութեան հաւատացեալներին: Կը յաջողւի՞ արդեօք
« այդ թէ ոչ, դա ինձ համար միեւնոյնն է. աւելին կ'ասեմ, ես գու-
« ցէ ուրախանամ, որ Պոլիսը Թիւրքերին մնայ, որպէսզի Հայերը
« վերջապէս դցեն հեռանաւ Պոլսի պէս լկտի, մեղկացուցիչ, դար-
« չահոտ մթնոլորտից. իրականն այն է, որ մեր եւ Թիւրքերի մէջ
« գծւած գիծը քաշւած է արդէն Վիլսոնի աղնիւ ու համարձակ ձեռ-
« քով. մեր եւ Թիւրքերի մէջ այլեւս ոչինչ, ոչինչ չկայ: Ի զուր են
« թրպլոտում Թիւրքերը. նրանք կ'օրցրել են անդարձ եւ Հայաստանը
« իր անբաժան Կիլիկիայով, եւ ողջ Արարիկան եւ Մեսոպոտամիան
« եւ Սիրիան եւ Պալեստինը եւ Ագալիան, եւ Ձմիւռնիան իր չըջա-
« պատով: Թիւրքիան այսօր Հայաստանից մեծ լինելու չէ եւ այն
« էլ... անպատճառ լինելու է tutelle ի տակ: Գոհ էք...:

« Բաջալերեցէ՛ք Հայութիւնը եւ թո՛ղ համադրային շինարար ու
« դեւորութիւնը վանի ամէն վհատութիւն: Բայց ո՞ւր է, ո՞ւր, Պոլ-
« սի հայութիւնը, ըստ երեւոյթին, յանձին իր յղիացած հասին,
« մնում է նոյն վայրադօրէն հասէ՛ր եւ բթամօրէն անդգայ զանգ-
« ւածը. պարարտ ու բուր անասնութիւն, որ դողում է վտանգի ժա-
« մին եւ հանդարտ որոճում ապահովութեան մէջ: Ո՛րչափ յանցանք
« ունի մեր ցեղը: Զմիւռնիան, կարծեմ, աւելի լաւ է: Հին ցաւ է
« այդ, հին ցաւ... »

« Իմացաք անուշտ, որ Հայաստանի Հանրապետութեան մէջ
« սկսւած են պարլամենտական ընտրութիւնների պատրաստութիւն-
« ներ Յունիսի 21-ի համար: Ուրախալի երեւոյթ է այս եւ մեծապէս
« զործնական: Անհրաժեշտ է, որ հայութեան բոլոր հատւածները,
« դադութ եւ «Թիւրքայ» Հայաստան ուժգնօրէն եւ իրապէս մասնակ-
« ցին այդ ընտրութիւններին եւ իսկոյն գլուխ բերեն Միացեալ Հա-
« յաստանի Միացեալ Պարլամենտ եւ կառավարութիւն կազմւած հին
« սահմանի այս ու այն կողմի արեւելեան եւ արեւմտեան Հայութեան
« ներկայացուցիչները: Կրկնում եմ, անհրաժեշտ է ժամ առաջ ի-
« րադործել այդ պարլամենտը, թո՛ղ թէկուզ մի փոքր էլ պակասա-
« ւոր լինի, հրամայական պահանջ է, որ մենք եկող մանդատէրին
« ներկայանանք կազմակերպւած, եւ ոչ թէ անարխիք լիճակում:
« Վերջին դէպքում, մանդատէր պետութիւնը կարող է մեզ միայն ծանր
« եւ մեր ազատութիւնը, մեր Ֆինանսական եւ տնտեսական հիմքը
« կաշկանդող պայմաններ դնել. տարաբախտաբար, այսքան պարզ
« միտքը չկարողացայ հասկացնել Պօղոս փաշային. պատճառն այն
« է, որ մարդը միանգամայն անծանօթ է մեր իրականութեան, մեր
« պայմաններին, մեր ժողովուրդին եւ մեր պահանջներին, սաւառնում
« է եթերներում: Զեղ եւ բոլոր Զեղ պէս ազնւօրէն մտածողների տեղն
« է Միացեալ Հայաստանի Պարլամենտը. ուստի խնդրում եմ Զեղ,
« եթէ հրաւէր ստանաք Զեր թեկնածութիւնը դնել Հայոց պարլա-
« մենտի անդամ, չհրաժարւէք. թո՛ղ Պոլսից քանի մը շնորհքով մալ-
« դիկ շտապով Երեւան անցնին: Մանրամասնութիւնը կը հաղորդի
« Զեղ նամակաւ Պ. Արմենակ Բարսեղեան: Կինս կը գրի Զեղ եւ Զե-
« րայնոց »

Բոլորիդ սրտազին ողջոյններս

Մայիս 25, 1919, Պարիս

Միշտ Զեր Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

Ահարոնեանի այս նամակը կարգացի Պատրիարքին, նաեւ ամէն
անոնց, որոնք հայկական հարցով կը հետաքրքրւէին ամէն օր, կար-

դացի զայն Հայ Բժշկական Միութեան Ժողովին մէջ, ուր ներկայ 40-ի չափ անդամները յոտնկայս ծափողջունեցին հաղորդեալ ըստ լուրի եւ ուղեցին, որ Միութեան կողմէ խնդակցութեան գիր մը ուղղէր Պ. Ահարոնեանին :

Կատարեցաւ այս որոշումը եւ Միութեան նամակը յանձնեցաւ զօրավար Կորկանեանին, որ Կ. Պոլիսը թողուց Մայիս 12-ին, բայց նախապէս պատուեցաւ թէյասեղանով, Հայկական Բիւլւարին մէջ, Մայիս 10-ին, ուր արտասանեցան ճառեր եւ բաժակաճառեր :

**

Բայց ես սկսայ խորհիլ, եւ որովհետեւ Ահարոնեան իր սոյն նամակին մէջ կառաջարկէր ինձ գնալ Հայաստան, եւ ահա պատրաստութիւններ անենելու եղայ եւ այս նպատակիս գործադրութեանը համար երկար գիր մը գրեցի իմ փարիզեան ուսումնակից վաղեմի բարեկամիս՝ Բժշկապետ Տօքթ. Վահան Արծրունիին, որ շուտով չպատասխանեց եւ հաղիւ 1919 Դեկտեմբերին վերջերը բախտ ունեցայ ստանալ իր 11 Դեկտեմբեր թւակիր նամակը, որ շատ քաջալերիչ չէր եւ կը պարզէր տխուր տողերով Հայաստանի անբաղձալի վիճակը :

Ահա այդ նամակը նոյնութեամբ :

Հ. Հ.

Երեւան, 11 Դեկտ. 1919

ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ

République d'Arménie

Ministre

de l'Instruction Publique

« Իմ ազնիւ ու վաղեմի ընկեր

« Պ. Վ. Թորգոմեանին,

Կ. Պոլիս

« Հաղիւ առիթը ներկայացաւ այս նամակը գրելու. այսուհետեւ
« դուցէ հնարաւոր լինի մեր գիւանդկոտական միասխայի անունով
« Ձեզ նամակներ յղել, որով բաւարարութիւն պիտի ստամ իմ բուն
« ջանկութեանը :

« Կողէք Ձեզ մի ամփոփ պաշտօնաւոր տալ մեր երկրի քաղաքական
« եւ տնտեսական վիճակի մասին. սակայն դրութիւնը տակաւին ա՛յն-
« չափ երերուն է, որ հաղիւ թէ մէկը կարողանայ վաղւայ մասին

« Երաշխաւոր լինել: Չնայած մեր Ազրբէջանի հետ կնքած ղրնադա-
 « դարին, նոյնիսկ դաշնադրին, ղրնական դործողութիւնները շարու-
 « նակուում են: Սով կարծես թէ չկայ, բայց սպառնալիքներ մեր գլխի
 « վրա է: Արդէն հացի գինը ահռելի չափերի է հասած եւ ներմուծ-
 « ւած հացով է կերակրւում մեր ժողովուրդը. մթերք չկայ, եղածն
 « էլ անմատչելի է. մեր ողորմելի դրամը օրէցօր ընկնում է, եւ ո՞վ
 « գիտէ ո՞ւր պիտի հասնի մեր թղթերի արժէքը: Մանդայի սպասե-
 « լիքը ներկայացրել է ամենքին, «Ամերիկան կընդունէ», «Ամերի-
 « կան չի ընդունի», իսկ մենք առանց մի մեծ հովանաւարող ուժի
 « ապրել չենք կարող:

« Ինչ եւ իցէ, դարձեալ ասենք, որ հիմի մի պետականութիւն
 « կարծես ունենք. կարդ ու կանոն նկատելի են: Սրիկաների կողքին
 « կան եւ սրտցաւ ազգասէրներ (հնացած բան է այժմ), որոնք ձեռ-
 « տում են սանձել-սրիկաներին. դողութիւն, շորթումներ եւ այլ ու-
 « ւազակութիւններ... Ահա մեր վարչական շրջանը. ո՞վ կարող է
 « կուռել այս ներքին աղէտի դէմ:

« Էհ, դուք էլ ուզում էք այստեղ դալ (??): Ձեր ազնիւ հայրե-
 « նասէր սիրտն էլ մեղի պէս պիտի խոցւի, դուք էլ պիտի տանջւիք
 « եւ ելք չգտնէք:

« Սակայն, տանջելով հանդերձ, մենք կուում ենք, յուսալով՝
 « որ մի օր ազնիւր եւ արդարը կը յաղթի: Ո՛րքան կուզէինք մեր շար-
 « քերի մէջ ունենալ բարեմիտ անձինք: Ես արդէն ակնարկել եմ մի-
 « նիստրներին ձեր մասին, բայց ձեր վերջնական որոշումը չունե-
 « նալով չեմ վստահացել մի որոշ առաջարկ անել Ձեզ հրաւիրելու
 « մասին: Եթէ ձեր ցանկութիւնն է այստեղ դալ, գրեցէք ինձ, եւ ես
 « յուսով եմ որ կառավարութեան հաճութիւնը կըստանանք, եւ դորձ
 « շատ կը դտնւի ձեզ համար: Իսկ ո՛րչափ երջանիկ կը լինէի ես, այդ
 « դուք լաւ կը հասկանաք:

« Դուք հետաքրքրւում էք դիտենալու թէ ի՞նչ պաշտօն ունեմ ես
 « այստեղ: Ինձ յանձնւած է վերհսկողութիւն ունենալ Հանրապետու-
 « թեան դպրոցների Փիղիքական մասի վրա (ինչպէս դուք գուշակել
 « էք) դպրոցական առողջապահութեան: Նաեւ ինձ է յանձնւած հան-
 « րային մարմնակրթական գործը: Բացի այդ անմիջական աշխա-
 « տանքը, ես, ի հարկէ, հասարակական ասպարիզում նոյնպէս որոշ
 « դեր եմ խաղում: Յետոյ, այժմ զբաղւած եմ բառարանիս վերջնա-
 « կան սրբադրութեան գործով, կառավարութիւնից կարգւած մի յա-
 « տուկ Յանձնաժողովի միջոցով: Կայ նաեւ «Առողջապահիկ» թեր-
 « թի հրատարակելու գործը, որը սկսւելու է, յուսով եմք, Յունւա-

« րին : Թերթը չա՛տ խղճուէի է լինելու սկզբներում , որովհետեւ ահ-
« ոելի ծախքեր է պահանջում :

« Ո՛րքան երջանիկ կը լինէի Ձեզնից պատասխան ստանալու ,
« մինչեւ որ , ո՛վ գիտէ , գուցէ դարնանը յաջողւի մեզ տեսնելու
« Պոլսում կամ այստեղ :

« Ամենամեծ կարօտով յղում եմ Ձեզ ընկերական ջերմ ողջոյնս ,

« Միշտ Ձեր անկեղծ բարեկամ ,

« Բժ. Վ. ԱՐԾՐՈՒՆԻ

Աւելորդ է ըսել , թէ Երեւան գնալու ծրագրիս հետեւանք չկրցայ
տալ , եւ մնացի Կ. Պոլիս , սպասելով լաւագոյն օրերու եւ քաջալերիչ
հանգամանքներու , մանաւանդ , որ Արծրունիի նամակէն առաջ Ահա-
րոնեանէն կըստանայի 1919 , Նոյեմբեր 5 թւականաւ մէկ ուրիշ գիր ,
որուն մէջ կըսէր՝

« Իմ սիրելի բարեկամ ,

« Յուսահատ կերելիք մեր հարցից , սիրելի բարեկամ , ինչ որ
« ասած եմ , նորից կրկնեմ — մենք կը յաղթենք , բնա՛ւ յուսահատե-
« լու չէ . Սանթարամէտի դիւական անդունդների բոլոր ուժերն իսկ
« համախմբեն , չտիտի կարողանան խափանել Ազատ , Անկախ ,
« Միացեալ Հայաստանը . կը տեսնէք այդ . . . :

« Ա՛հ , եթէ մի փոքր աւելի իմաստութիւն լինէր այս տեղ իմ
« չուրջը , ու աւելի պակաս վատթար ազգասիրութիւն , յետոյ իմա-
« տութիւն նաեւ հոռուները , մանաւանդ Պոլսոյ յայտնի մթնոլոր-
« տում : Իմաստութիւն , իմաստութիւն եւ անձնւիրութիւն , ու մենք
« կը փրկէինք :

« Զերմ բարեւներ Ձեզ եւ բոլոր Ձերայնոց

« Ձեր Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

Ահարոնեան չյուսահատել կը յանձնարարէր ինձ . բայց կարելի՞
էր այդ , երբ տակաւ լուրերը տիտուր հանգամանք կըստանային , եւ
ո՛չ մէկ խոստումի կատարումը տեղի կունենար : Ահարոնեան «Իմաս-
տութիւն» ալ կը պատկերէր . ո՞ւր կը ծախէր արդեօք ԻՄԱՍՏՈՒ-
թիւն , դոր չունեցանք բնաւ , եւ անխոհեմ ու իրերատեաց անմիա-
բանութեամբ , պատճառ եղանք , որ մեր ազգային հարցը ջուրը ի՞-
նար ու մոռացութեան դատասպարուէր իսկովին . . . : Ո՛րչափ իրաւացի
է Խորենացիի խօսքը՝ «Ողբամ գեթ , Հայոց աշխարհ» :

Փարիզ